ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԻՍԱՄՅԱԿԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. Համայնքի 2013 թվականի երկրորդ կիսամյակի բյուջեի կատարողականը՝

2013 թվականի համայնքի բյուջեի վարչական մասով եկամուտների հաշվարկը պլանավորվել է 26834,2 հազար դրամ, որից սեփական եկամուտները կազմում է 5599,5 հազար դրամ է: Հավաքագրվել և բյուջե է մուտքագրվել սեփական եկամուտ՝ 5407,2 հազար դրամ, որը կազմում է 96,6 %:

Ֆոնդային մասով չեն եղել պլանային՝և փաստացի մուտքեր:

Տարեսկզբի ազատ մնացորդը եղել է 486,1 հազար դրամ:

ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

հազար դրամ

	Եկամուտների տեսակները	Տարեկան պլան	Փաստացի	Տոկոս
1	հողի հարկ	1890,0	1892,3	100,1
2	գույքահարկ	2831,6	2529,5	89,3
3	տեղական տուրք	159,0	240,2	151,1
4	հողի վարձակալության վճար	18,9	18,9	100,0
5	տեղական վճար (աղբահանություն)	700,0	726,3	103,7
6	դոտացիա	20535,5	20535,5	100,0
7	սուբվենցիա	699,2	699,2	100,0
	ԸՆԴԱՄԵՆԸ	26834,2	26641,9	99,3

ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐ

հազար դրամ

	Ծախսերի տեսակները	Տարեկան պլան	Փաստացի	Տոկոս
1	կառավարման ապարատ	15225,3	15077,3	99,0
2	նախադպրոցական կրթություն	8991,5	8991,5	100,0
3	սոց.ծրագրեր	700,0	700,0	100,0
4	այլ մշակութային կազմակերպություններ	950,0	682,8	71,9
5	հրատարակչություն	133,5	133,3	99,8
6	աղբահանություն	1320,0	1320,0	100,0
	ԸՆԴԱՄԵՆԸ	27320,3	26904,9	98,5

2. 2013 թվականի երկրորդ կիսամյակի ընթացքում կատարված աշխատանքները.

1. Հրավիրվել և անցկացվել է ավագանու 4 նիստ՝ 3 հերթական, 1 արտահերթ ավագանու կանոնակարգով սահմանված կարգով, որի ընթացքում ընդունվել է ավագանու 21 որոշում:
2. Ընդունվել է համայնքի ղեկավարի 23 որոշում, արձակվել՝ 15 կարգադրություն:
3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարան և այլ կազմակերպություններ են ուղարկվել 124 գրություններ:
4. Բնակիչներին տրամադրվել են 305 տարբեր բնույթի տեղեկանքներ:
5. Կատարվել է քաղաքացիների ընդունելություն, քննության է առնվել նրանց առաջարկությունները, դիմումները, ձեռնարկվել են համապատասխան միջոցներ՝ դրանց լուծման ուղղությամբ:
6. Համայնքի առաջին դասարան հաճախող 32 երեխաների համար գնվել են նվերներ՝ դպրոցական պայուսակներ և գրենական պիտույքներ՝ 262,4 հազար դրամ գումարով:
7. Համայնքի 4 անապահով ընտանիքներին տրվել է 135,0 հազար դրամ, իսկ դպրոցական թվով 20 երեխաներին՝ աշակերտական հագուստ գնելու համար՝ 280,0 հազար դրամ դրամական օգնություն:
8. Գնվել է նոր համակարգիչ և մոնիտոր՝ 209,0 հազար դրամ գումարով:
9. Ամանորի կապակցությամբ մանկապարտեզի երեխաների համար գնվել են ամանորյա տոպրակներ՝ 77,0 հազար դրամ գումարով, իսկ աշխատակիցների համար՝ համերգի տոմսեր՝ 30,0 հազար դրամով:
10. Ակումբի և գրադարանի շենքերի համար հանվել են սեփականության իրավունքի վկայականներ, որի համար տրամադրվել է 150,0 հազար դրամ:
11. Մշակութային ծարգրերի կազմակերպման համար, ելնելով բյուջետային ծախսերի անհրաժեշտությունից, ստեղծվել է նոր «Մշակույթ և սպորտ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը:
12. Համայնքների միությանը փոխանցվել է 16,0 հազար դրամ անդամավճար:
13. Աշխատանքային պարտականությունները բարեխիղճ կատարելու համար գյուղապետարանի աշխատակիցների նկատմամբ կիրառվել է խրախուսում՝ յուրաքանչյուրին մեկ ամսվա աշխատավարձի չափով, ընդամենը՝ 917,6 հազար դրամ գումար:
14. Պարբերաբար 7 օրը մեկ իրականացվել է աղբահանություն:
15. Աշխատավարձի վճարումների գծով պարտքեր չկան:

Առաջնային հիմնախնդիրներից է՝

1. Համայնքի փողոցների լուսավորության անցկացում:
2. Գերեզմանատան ցանկապատում:

3. Մանկապարտեզի շենքի 2-րդ հարկի մի մասնաշենքի վերանորոգում:
4. Մշակույթի տան նոր դահլիճի կառուցում:

Այգեկ համայնքի ղեկավար՝ Վ. Աբրահամյան

2014 թվականի հունվարի 21
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզ գ. Այգեկ